



# Հիմնական տնտեսական միտումները Հայաստանում

Հունվար 2006

Ներկայացվում են 2006 թվականի հունվարի դրությամբ առկա վերջին ամսական ցուցանիշները: ՀՆԱ-ի, համախառն թողարկման, պետական բյուջեի, արտաքին հատվածի վերջին թարմ ամսական տվյալները վերաբերում են հունվար-նոյեմբեր ամիսներին, իսկ ֆինանսական, արտարժույթային և սպառողական շուկաների ցուցանիշները՝ դեկտեմբերին:

Ելենա Մանուկյան

Հրատարակվում է «Օքսֆամ» ՄԲ աջակցությամբ



## Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ամփոփում

	2002	2003	2004	2002	2003	2004	2005
	տարեկան ցուցանիշներ			հունվար-նոյեմբերի ցուցանիշներ			
<b>Իրական հատված</b>							
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	739.6	874.4	1,106.7	641.3	750.2	942.9	1,302.8
ՀՆԱ-ի իրական աճ (%)	13.2	14.0	10.1	12.5	15.1	10.0	13.5
Արդյունաբերության աճ (%)	13.9	15.6	2.1	16.1	18.2	1.5	6.6
Գյուղատնտեսության աճ (%)	3.8	4.2	14.5	4.1	2.2	14.3	10.9
Շինարարության աճ (%)	41.5	45.5	13.4	42.5	53.1	13.2	34.1
Տրանսպորտ և կապի աճ (%)	-1.7	8.3	16.9	6.2	6.6	17.6	12.9
Առևտուր և հանրային սննդի աճ (%)	19.7	14.1	10.5	15.0	14.4	9.2	9.4
Ծառայությունների աճ (%)	12.0	8.6	12.1	6.5	6.7	13.2	10.6
ՀՆԱ-ի դեֆլյատոր (%)	0.7	4.6	6.0	2.4	2.9	6.0	3.9
Սպառողական գների ինդեքս (d/2 միջին, %)	1.1	4.7	7.0	1.0	4.4	7.4	0.7
<b>Հարկաբյուջետային հատված (պետական բյուջեի ցուցանիշներն ըստ ֆինանսավորման)</b>							
Հարկային եկամուտներ (մլրդ դրամ)	185.4	212.2	250.1	162.9	186.0	221.9	270.6
Ծախսեր (մլրդ դրամ)	235.8	242.0	295.9	196.9	213.4	257.0	338.8
Դեֆիցիտ (մլրդ դրամ)	7.8	-8.1	-2.0	-0.6	-1.0	-7.2	13.4
Հարկային եկամուտներ (ՀՆԱ-ի %)	13.6	13.1	13.2	13.8	13.3	13.6	14.1
Ծախսեր (ՀՆԱ-ի %)	17.3	14.9	15.6	16.7	15.3	15.8	17.6
Դեֆիցիտ (ՀՆԱ-ի %)	0.6	0.5	0.1	0.05	0.1	0.4	0.7
<b>Արտաքին հատված</b>							
Արտահանում (ՖՕԲ, մլն ԱՄՆ դոլար)	505.2	685.6	715.0	455.5	626.2	646.2	867.4
Ներմուծում (ՍԻՖ, մլն ԱՄՆ դոլար)	987.2	1,279.5	1,351.0	873.5	1,158.0	1,212.7	1,581.6
Առևտրային հաշվեկշիռ (մլն ԱՄՆ դոլար)	-482.0	-593.9	-635.9	-417.9	-531.8	-566.5	-714.2
Արտահանման աճ (%)	47.8	35.7	4.3	49.7	37.5	3.2	34.2
Ներմուծման աճ (%)	12.5	29.6	5.6	10.9	32.6	4.7	30.4
Առևտրային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %)	20.3	21.2	17.9	20.3	22.1	18.7	17.0
<b>Դրամավարկային հատված</b>							
Փողի զանգված (d/2 վերջ, մլրդ դրամ)	203.1	233.8	285.9	185.6	211.2	264.9	337.1
ՀՀ ԿԲ շուկա արտաքին ակտիվներ (մլրդ դրամ)	123.7	157.8	168.9	102.5	138.9	154.1	223.0
Փողի զանգվածի շրջապտույտի արագություն*	6.7	6.9	6.6	6.4	6.6	6.1	5.7
Փողի բազմարկիչ	2.0	2.1	2.2	2.1	2.0	2.3	1.9

\* Հաշվարկվել է որպես անվանական ՀՆԱ-ի և փողի զանգվածի հարաբերություն:  
Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ:

## Ֆինանսական, արտաբյուջային և սպառողական շուկաներ

	2002	2003	2004	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
	տարեկան ցուցանիշներ			2005-ի ամսական ցուցանիշներ									
<b>Պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերություն (%)</b>													
9-12-ամսյա ՊԿՊ-ներ	15.6	9.7	-	3.9	3.7	4.9	-	-	3.2	3.8	3.9	3.8	-
Միջնաժամկետ մասնակի մարումներով	19.7	-	5.6	4.6	5.3	4.9	5.7	5.3	5.1	-	-	5.1	-
ՀՀ ԿԲ բանկային տոկոսի հաշվարկային դրույք	19.0	18.0	16.0	16.0	16.0	16.0	18.0	18.0	17.0	17.0	16.0	16.0	16.0
Վարկերի տոկոսադրույքներ	18.8	20.9	18.2	19.1	16.6	18.9	18.0	18.4	18.4	17.7	18.3	17.4	17.3
Ավանդների տոկոսադրույքներ	4.2	6.4	4.4	5.9	5.8	5.6	6.1	6.0	6.2	6.5	5.8	5.4	6.5
Դրամ / ԱՄՆ դոլար միջին փոխարժեքի աճ (%)	3.3	0.9	-7.8	-1.6	-3.9	0.3	-0.1	-1.4	4.1	-1.4	-1.1	2.0	-1.9
Դրամ / ԱՄՆ դոլար փոխարժեք (d/2 վերջ)	584.9	566.0	485.8	458.1	439.3	445.1	442.3	447.7	468.3	444.2	451.2	449.4	450.2
Դրամ / ԵՎՐՈ փոխարժեք (d/2 վերջ)	606.9	702.2	661.1	593.0	566.9	555.1	533.2	541.7	570.5	535.9	547.7	529.9	532.4
Դրամ / ՌԴ ռուբլի փոխարժեք (d/2 վերջ)	18.3	19.2	17.5	16.5	15.8	15.8	15.4	15.6	16.4	15.6	15.9	15.6	15.6
Սպառողական գների ինդեքս (d/2 վերջ, %)	2.0	8.6	2.0	-0.9	-0.9	0.1	-1.4	-4.5	-1.4	0.9	0.1	1.1	2.3
Պարենային ապրանքներ*	1.2	6.1	9.9	-1.4	-1.3	0.0	-2.1	-6.4	-2.2	0.9	0.0	1.5	3.5
Ոչ պարենային ապրանքներ	0.2	1.9	0.6	-0.4	-0.2	-0.3	-0.1	-0.2	0.4	1.7	0.6	0.5	-0.2
Ծառայություններ	1.1	1.9	1.5	0.6	0.1	1.0	0.4	-0.2	0.4	0.5	0.1	0.2	-0.1

\* Ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ:  
Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ԱՎԾ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ:

## Հիմնական միտումները

### Իրական հատված

2005 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների դրությամբ տնտեսական աճը կազմեց 13.5 տոկոս, որի պարագայում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի գներով հաշվարկված ՀՆԱ-ն ավելացավ 1,003 միլիոն ԱՄՆ դոլարով և կազմեց 4,032 միլիոն ԱՄՆ դոլար: Արդյունքում մեկ շնչին ընկնող անվանական ՀՆԱ-ն 2004-ի հունվար-նոյեմբերի համեմատ ավելացավ 360 ԱՄՆ դոլարով և կազմեց 1,303 ԱՄՆ դոլար:

Տնտեսական աճին առավել նպաստեցին շինարարության և գյուղատնտեսության ճյուղերը՝ ապահովելով աճի, համապատասխանաբար, 5.2 և 2.4 տոկոսային կետերը: Առավել բարձր աճի տեմպերով աչքի ընկան շինարարության՝ 34.1 տոկոս, տրանսպորտ և կապ՝ 12.9 տոկոս և գյուղատնտեսության ճյուղերը՝ 10.9 տոկոս: Նվազագույն աճն արդյունաբերության ճյուղում էր՝ 6.6 տոկոս:

### Բյուջետային հատված

ՀՀ ՖԷՆ նախնական տվյալների համաձայն 2005 թվականի հունվար-նոյեմբերին պետական բյուջեի ծախսերի աճը 8.7 տոկոսային կետով առաջանցիկ էր եկամուտների աճից, որի արդյունքում ձևավորվեց 13.4 միլիարդ դրամի պակասուրդ:

Հարկային եկամուտների 21.9 տոկոս աճը հիմնականում ԱԱՀ-ից և շահութահարկից մուտքերի, համապատասխանաբար, 26.6 և 46.5 տոկոսով աճերի արդյունք էր: Շարունակվեց ակցիզային հարկից և պարզեցված հարկից մուտքերի անկումը, համապատասխանաբար, 5.6 և 6.3 տոկոսով: Նախորդ տարվա համեմատ շուրջ 2.5 անգամ ավելացան ոչ հարկային եկամուտները: Միևնույն ժամանակ մոտ կրկնակի կրճատվեցին պաշտոնական տրանսֆերտները:

2005-ի հունվար-նոյեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրկնապատկվեցին կապիտալ ծախսերի իրականացմանն ուղղված միջոցները, 14.2 տոկոսով աճեցին արտաքին պարտքի դիմաց տոկոսավճարները: Միևնույն ժամանակ նվազեցին ներքին պարտքի դիմաց տոկոսավճարները և սուբսիդիաները, համապատասխանաբար, 8.7 և 11.4 տոկոսով:

Պետբյուջեի ծախսերի հիմնական ուղղությունը՝ 46.6 տոկոսը կազմեցին պաշտպանության, կրթության և գիտության ոլորտներին, ինչպես նաև հիմնական խմբին չդասվող ծախսերի ֆինանսավորմանն ուղղված միջոցները: Նախորդ տարվա համեմատ հատկացումների առավել մեծ աճ՝ մոտ 2.5 անգամ արձանագրվեց բնակարանային կոմունալ տնտեսությանն ուղղված միջոցների գծով:

### Արտաքին առևտուր

2005 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին արտահանման աճը 3.8 տոկոսային կետով առաջանցիկ էր ներմուծման աճից: Այնուամենայնիվ, ՀՆԱ-ի համեմատ ներմուծման կշռի 17 տոկոսային կետով գերազանցման պարագայում առևտրային հաշվեկշռի սալդոն բացասական էր: Առանց մարդասիրական օգնության այն կազմեց 683.3 միլիոն ԱՄՆ դոլար:

2005 թվականի տասնմեկ ամիսների դրությամբ արտահանվող ապրանքների 53 տոկոսն ուղղվեց Գերմանիա, Ռուսաստանի Դաշնություն, Նիդեռլանդներ և Իսրայել: Ընդ որում 2004-ի հունվար-նոյեմբերի համեմատ Գերմանիա արտահանվող ապրանքների ծավալներն ավելացան 2 անգամ, Նիդեռլանդներ՝ 5 անգամ, Ռուսաստան՝ 47 տոկոսով և դեպի Իսրայել՝ 20.3 տոկոսով:

Ներմուծման ծավալների 30.4 տոկոս աճը հիմնականում պայմանավորված էր Ռուսաստանից՝ 62 տոկոսով, Մեծ Բրիտանիայից՝ 8 անգամ, Պանամայից՝ 27 անգամ և Բելգիայից՝ 53 տոկոսով ներմուծման ծավալների աճերով:

2005-ի հունվար-նոյեմբերի դրությամբ արտաքին առևտրաշրջանառության առավել մեծ ծավալներ՝ 315 միլիոն ԱՄՆ դոլար, Ռուսաստանի Դաշնության հետ առևտրի գծով էր:

### **Դրամավարկային հատված**

2005-ի նոյեմբերի վերջի դրությամբ փողի զանգվածը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցեց 27.3 տոկոսով կամ 72 միլիարդ դրամով: Շրջանառության մեջ կանխիկն աճեց 50.7 տոկոսով, ԶՅ դրամով ավանդները՝ 52.9 տոկոսով, որից ցպահանջ ավանդների աճը կրկնակի էր: Արտարժույթով ավանդների աճը, որոնց հաշվին ձևավորվել էր փողի զանգվածի 40 տոկոսը, կազմեց 2.6 տոկոս:

Պահպանելով նախորդ ամսվա միտումները նոյեմբերին՝ հոկտեմբերի համեմատ շարունակվեց արտարժույթով ավանդների կրճատումը և ԶՅ դրամով ավանդների աճը, որոնք կազմեցին 3.7 և 3.4 տոկոս համապատասխանաբար: Արդյունքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտարժույթով ավանդների կշիռը փողի զանգվածի կառուցվածքում կրճատվեց 10 տոկոսային կետով, որի հետևանքով 0.9 տոկոսային կետով բարելավվեց արտարժույթով և դրամով ավանդների հարաբերակցությունը:

### **Արտարժույթային փոխարժեքներ**

2005 թվականի հունվար-դեկտեմբերի դրությամբ ԶՅ դրամի միջին փոխարժեքն արժեքավորվեց բոլոր հիմնական փոխարժեքների համեմատ, այդ թվում՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ 14.2 տոկոսով կամ 76 դրամով, եվրոյի նկատմամբ՝ 13.9 տոկոսով կամ 92 դրամով, իսկ ռուսական ռուբլու նկատմամբ՝ 12.6 տոկոսով կամ 2.3 դրամով:

2005 թվականի դեկտեմբերի վերջին նախորդ տարվա դեկտեմբերի վերջի համեմատ դրամի փոխարժեքը նույնպես արժեքավորվեց, այդ թվում՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ 7.3 տոկոսով կամ 36 դրամով, եվրոյի նկատմամբ՝ 19.5 տոկոսով կամ 129 դրամով, իսկ ռուսական ռուբլու նկատմամբ՝ 10.7 տոկոսով կամ 1.9 դրամով:

### **Սպառողական շուկա**

2005 թվականի դեկտեմբերին սպառողական շուկայում տեղի ունեցավ 2.3 տոկոս գնաճ, որը հիմնականում պարենային ապրանքների գների 3.9 տոկոսով աճի արդյունք էր: Այս ապրանքախմբի կազմում նոյեմբերի նկատմամբ առավել թանկացան բանջարեղենն ու կարտոֆիլը՝ 22.4 տոկոսով, ձկնամթերքը՝ 15.9 տոկոսով, ձուն՝ 12.5 տոկոսով և միրգը՝ 12.3 տոկոսով: Միևնույն ժամանակ ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գները նվազեցին, համապատասխանաբար, 0.2 և 0.1 տոկոսով: Արդյունքում 2005-ի դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ սպառողական ապրանքների գները Չայաստանում նվազեցին 0.2 տոկոսով:

Այսպիսով 2005 թվականին սպառողական գների տարեկան միջին գնաճը կազմեց 0.6 տոկոս, նախորդ տարվա 7.0 տոկոսի փոխարեն:

2005 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին ԶՆԱ-ի դեֆլյատորը կազմեց 3.9 տոկոս: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ առավել բարձր էր շինարարության ճյուղի դեֆլյատորը՝ 17.9 տոկոս, իսկ առավելագույն գնանկումը գյուղատնտեսության ճյուղում էր՝ 13.4 տոկոս:

## Հիմնական բյուջետային ցուցանիշներ

միլիարդ դրամ, ըստ ֆինանսավորման

	2002	2003	2004	2002	2003	2004	2005
	տարեկան ցուցանիշներ			հունվար-նոյեմբերի ցուցանիշներ			
<b>Պետբյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ</b>	<b>228.0</b>	<b>250.1</b>	<b>297.9</b>	<b>197.4</b>	<b>214.3</b>	<b>264.3</b>	<b>325.3</b>
<b>Ընդամենը եկամուտներ</b>	<b>211.3</b>	<b>240.2</b>	<b>288.2</b>	<b>186.8</b>	<b>210.7</b>	<b>257.1</b>	<b>322.0</b>
Ընթացիկ եկամուտներ	209.5	237.0	279.1	185.1	207.7	248.6	312.8
Հարկային եկամուտներ, այդ թվում	185.4	212.2	250.1	162.9	186.0	221.9	270.6
Ավելացված արժեքի հարկ	95.0	107.8	117.9	81.9	94.4	104.3	132.0
Շահութահարկ	17.4	17.6	32.0	16.0	14.6	27.5	40.2
Եկամտահարկ	12.5	16.8	20.4	10.8	14.5	17.9	22.9
Ակցիզային հարկ	35.3	39.1	40.7	31.2	35.8	36.8	34.8
Պետական տուրք	13.2	15.2	16.9	12.2	14.1	15.6	15.9
Ոչ հարկային եկամուտներ	10.9	9.5	12.0	10.0	7.6	11.1	26.2
Կապիտալ եկամուտներ	1.8	3.2	9.1	1.7	3.0	8.6	9.2
<b>Պաշտոնական տրանսֆերտներ</b>	<b>16.7</b>	<b>9.9</b>	<b>9.7</b>	<b>10.7</b>	<b>3.6</b>	<b>7.1</b>	<b>3.4</b>
<b>Պետբյուջեի ծախսեր</b>	<b>235.8</b>	<b>242.0</b>	<b>295.9</b>	<b>196.9</b>	<b>213.4</b>	<b>257.0</b>	<b>338.8</b>
Պաշտպանություն	36.8	44.3	52.5	34.3	41.2	46.8	59.8
Հասարակական կարգի պահպանություն	15.9	19.9	23.2	14.2	17.6	19.1	26.9
Կրթություն և գիտություն	29.1	32.9	45.2	24.3	29.5	38.9	50.5
Առողջապահություն	14.8	18.9	24.3	10.3	16.1	20.3	24.8
Սոց. ապահովագրություն և ապահովություն	23.8	29.3	35.3	20.6	25.9	31.6	39.1
<b>Ընթացիկ ծախսեր</b>	<b>210.4</b>	<b>214.5</b>	<b>252.8</b>	<b>174.3</b>	<b>192.2</b>	<b>221.4</b>	<b>269.7</b>
Աշխատավարձ	20.9	13.9	24.3	17.4	11.1	20.3	27.7
Տոկոսավճարներ	15.7	11.3	9.8	13.5	10.4	8.8	8.9
Սուբսիդիաներ	8.2	15.1	18.4	7.6	14.2	17.1	15.1
Ընթացիկ տրանսֆերտներ	47.8	43.9	60.1	38.7	39.0	54.4	67.1
Ապրանքներ և ծառայություններ	117.8	130.3	140.1	97.2	117.4	120.9	151.0
<b>Կապիտալ ծախսեր</b>	<b>13.6</b>	<b>21.6</b>	<b>32.7</b>	<b>11.2</b>	<b>17.3</b>	<b>25.9</b>	<b>57.1</b>
<b>Վարկավորում հանած մարում</b>	<b>11.8</b>	<b>5.8</b>	<b>10.5</b>	<b>11.4</b>	<b>4.0</b>	<b>9.7</b>	<b>12.0</b>
<b>Դեֆիցիտի ֆինանսավորում</b>	<b>7.8</b>	<b>-8.1</b>	<b>-2.0</b>	<b>-0.6</b>	<b>-1.0</b>	<b>-7.2</b>	<b>13.4</b>

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ, ըստ ֆինանսավորման

	2002	2003	2004	2002	2003	2004	2005
	տարեկան ցուցանիշներ			հունվար-նոյեմբերի ցուցանիշներ			
<b>Հարկային եկամուտներ, այդ թվում</b>	<b>13.6</b>	<b>13.1</b>	<b>13.2</b>	<b>13.8</b>	<b>13.3</b>	<b>13.6</b>	<b>14.1</b>
Ավելացված արժեքի հարկ	7.0	6.6	6.2	6.9	6.8	6.4	6.9
Շահութահարկ	1.3	1.1	1.7	1.4	1.0	1.7	2.1
Եկամտահարկ	0.9	1.0	1.1	0.9	1.0	1.1	1.2
Ակցիզային հարկ	2.6	2.4	2.1	2.6	2.6	2.3	1.8
<b>Պաշտոնական տրանսֆերտներ</b>	<b>1.2</b>	<b>0.6</b>	<b>0.5</b>	<b>0.9</b>	<b>0.3</b>	<b>0.4</b>	<b>0.2</b>
<b>Ընդամենը պետբյուջեի ծախսեր, այդ թվում</b>	<b>17.3</b>	<b>14.9</b>	<b>15.6</b>	<b>16.7</b>	<b>15.3</b>	<b>15.8</b>	<b>17.6</b>
Պաշտպանություն	2.7	2.7	2.8	2.9	2.9	2.9	3.1
Հասարակական կարգի պահպանություն	1.2	1.2	1.2	1.2	1.3	1.2	1.4
Կրթություն և գիտություն	2.1	2.0	2.4	2.1	2.1	2.4	2.6
Առողջապահություն	1.1	1.2	1.3	0.9	1.1	1.2	1.3
Սոց. ապահովագրություն և ապահովություն	1.8	1.8	1.9	1.8	1.9	1.9	2.0
<b>Դեֆիցիտի ֆինանսավորում</b>	<b>0.6</b>	<b>0.5</b>	<b>0.1</b>	<b>0.05</b>	<b>0.1</b>	<b>0.4</b>	<b>0.7</b>

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, S23 կենտրոնի հաշվարկներ: